

ԼԵՎՈՆ (ՆԵՐՍԵՀ ԱԲՂ.) ԱԼՈՅԱՆ

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ակադ. Հր. Թամրազյանի անվ.
հայ գրականության պատմության և գրականության տեսության
ամբիոնի հայցորդ, Երոսաղեմի Հայոց պատրիարքության «Սիոն»
ամսագրի գլխավոր խմբագիր
ORCID ID: 0000-0002-5149-1853
fr.nerseh@yahoo.com, +972543167564

DOI: 10.54503/1829-0116-2023.1-54

ԾԵՐԵՆՑԻ ՊԱՏՄԱՎԵՊԵՐԻ ԱՐՔՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր - Ծերենց, պատմավեպ, «Թորոս Լևոնի», «Երկունք Թ
Դարու», «Թեոդորոս Ռշտունի», աղբյուրագիտական քննություն, պատմա-
համեմատություն

Սույն հոդվածի նպատակն է պարզել, թե պատմական ինչ սկզբնաղբյուր-
ներից է օգտվել Ծերենցն իր «Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու» և «Թեոդո-
րոս Ռշտունի» պատմավեպերը ստեղծելիս և պատմական որ ժամանակաշր-
ջանների վրա է կենտրոնացրել իր ուշադրությունը: Անդրադարձ է կատարվել
նաև վիպասանի գեղարվեստական մտածողության առանձնահատկություն-
ներին:

Հոդվածի խնդիրը վերոնշյալ վեպերի պատմագիտական սկզբնաղբյուր-
ների հայտնաբերելն ու նրաց գեղարվեստական իրացման զուգահեռներին
անդրադառնալն է, որպեսզի կարողանանք տեսնել, թե դրանք ինչ չափով են
ազդել պատմավիպասանի գեղարվեստական մտածողության ու ստեղծագո-
րական նպատակաուղղվածության վրա:

Ուսումնասիրությունը կատարվել է պատմահամեմատական ու պատ-
մաքննական, ինչպես նաև աղբյուրագիտական քննության մեթոդների կի-
րառմամբ:

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ
Ծերենցն իր երեք պատմավեպերը ստեղծելու համար որպես սկզբնաղբյուր
օգտագործել է Սեբեոսի, Հովհաննես Դրասխանակերտցու, Թովմա Արծրու-
նու, Սմբատ Սպարապետի, Ղևոնդ Ալիշանի, Մատթեոս Ուռուհայեցու, Ղևոնդ
պատմիչի աշխատությունները: Վիպասանի համար աղբյուրագիտական

հիմք է ծառայել նաև 1850 թ. «Արարատ» ամսագրում «պատմական» խորագրի տակ շարունակաբար տպագրվող «Յեղափոխութիւն Կիլիկիոյ» գեղարվեստականացված պատմագիտական նյութը: Պետք է արձանագրենք նաև, որ Ծերենցի կողմից պատմիչներից օգտվելու երևույթը բոլորովին չի սահմանափակել նրա ստեղծագործական ինքնուրույնությունը: Որպես ստեղծագործող՝ վիպասանը ինքնուրույն է և՛ պատմիչներից օգտվելիս, և՛ նրանց բացատրություններին հակադրվելիս, որովհետև երկու դեպքում էլ նա այդ բոլորը ենթարկում է իր ստեղծագործական մտահողացումներին, վիպական սյուժեների գեղարվեստական ներքին օրինաչափություններին:

LEVON (ARCHIMANDRITE NERSEH) ALOYAN

YSU, Faculty of Armenian Philology, Chair of History of Armenian Literature and Literary Theory after Academician Hrant Tamrazyan, Ph.D. Student; editor-in-chief of the periodical of the Armenian Patriarchate of Jerusalem "Sion"

EXAMINING THE SOURCES OF TSERENTS'S HISTORICAL NOVELS

Key words: Tserents, historical novel, "Toros, Son of Levon," "The Travails of the 9th Century," "Theodoros Rshtuni," source examination, historical comparison.

This article aims to find out what historical sources Tserents used in his historical novels "Toros, Son of Levon," "The Travails of the 9th Century," and "Theodoros Rshtuni" and what historical periods he focused on when writing these novels. The article also touches upon the peculiarities of the novelist's artistic thinking.

The purpose of this article is to identify the historical sources of the above-mentioned novels and to reflect on the parallels of their artistic realization, in order to show to what extent they have influenced the author's artistic thinking and creative purpose.

The study was conducted through historical-comparative, exploratory, and source research methods.

Based on the study, we can conclude that when working on his novels, Tserents used the works of Sebeos, Hovhannes Draskhanakertsi, Tovma Artsruni, Sempad the Constable, Ghevont Alishan, Matthew of Edessa, Ghevond the Historian as primary sources. Another source was "Revolution of Cilicia" historical

material published under the title “historical” in the “Ararat” magazine in 1850. It should also be noted that Tserents’s use of historical sources did not in any way limit his creative freedom. As a creator, the novelist was free to both use the historians’ perspectives and oppose to those, since in both cases he subjected them all to his creative ideas, to the internal patterns of the novel plots.

ЛЕВОН (АРХИМАНДРИТ НЕРСЕ) АЛОЯН

*Соискатель кафедры истории армянской литературы
и литературоведения имени Гранта Тамразяна ЕГУ,
главный редактор журнала Армянского Иерусалимского
патриархата «Сион»*

ИСТОЧНИКОВЕДЧЕСКИЙ АНАЛИЗ ИСТОРИЧЕСКИХ РОМАНОВ ЦЕРЕНЦА

Ключевые слова: Церенц, исторический роман, «Торос Левони», «Рождение IX века», «Теодорос Рштуни», источниковедческий и историко-сравнительный анализ

Цель данной статьи обозначить те источники, которые были использованы Церенцом во время создания своих исторических романов - «Торос Левони», «Рождение IX века», «Теодорос Рштуни», и на какие исторические периоды акцентировал свое внимание автор. Был сделан ремарк и на художественные особенности мышления романиста.

Задача статьи выявления исторических первоисточников этих романов и обозначение параллелий их художественной реализации, для того, чтоб можно было видеть степень их влияния на художественное мышление и творческие цели романиста.

Исследование сделано методами историко-сравнительным и историческим, а так же методами источниковедческого анализа.

В заключении сделанного исследования можно умозаключить, что Церенц для создания своих троих романов в виде источника использовал работы Себеоса, Иоанна Драсханакертци, Фомы Арцруни, Смбата Спарапета, Гевона Алишана, Матфея Урхаеци, историка Гевонда. Для работ романиста был источником и художественно-исторический материал «Революция Киликии», который периодически публиковался в 1850 г. в историческом разделе журнала «Арабат». Надо отметить, что явление использования

работ историков Церенцом не ограничил его художественную самостоятельность. Как созидатель, романист самостоятелен и во время использования материалов историков и во время несогласия с их объяснениями, ибо все подконтрольны его художественным идеям и внутренней художественной закономерности сюжетам романа.

Մուտք

Ծերենցը երկար տարիներ ապրել ու ստեղծագործել է թուրքական բռնապետության դժնդակ պայմաններում, սեփական աչքերով տեսել տառապող ժողովրդի թշվառ վիճակը, նրա ողբալի կացությունը: Ուստի քաջ գիտակցում էր, որ անասելի բռնության ու հալածանքի պայմաններում ապրող ու պայքարող հայ ժողովրդի համար միանգամայն ուսանելի ու դաստիարակիչ են պատմական իրողություններն ու փորձը: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ Նա դիմել է պատմական անցյալին և գովերգել իրենց մահկանացուն հայրենասիրական սիրանքով կնքած անմահ հերոսներին՝ նրանց օրինակով ոգևորելով իր ժամանակի հայ երիտասարդությանը: Նա առաջին պատմավիպասանն էր, որ, քաջածանոթ լինելով հայոց պատմությանը, հայկական միջանդարը՝ իրենից ավելի քան հազար տարի առաջ գոյություն ունեցող կյանքը, դարձրեց պատմավեպի նյութ:

Սույն ուսումնասիրության շրջանակներում փորձել ենք պարզել՝ պատմական ինչ սկզբնաղբյուրներից է օգտվել Ծերենցը և իր վեպերում պատմական որ ժամանակաշրջանների վրա է կենտրոնացրել իր ուշադրությունը: Անդրադարձել ենք Նաև վիպասանի գեղարվեստական մտածողության առանձնահատկություններին:

«**Թորոս Լևոնի**» վեպում Ծերենցը պատկերում է Կիլիկիայի Լևոն իշխանի որդու՝ Թորոսի կողմից XII դարի կեսերին Կիլիկիայի հայկական պետականության վերականգնման պատմությունը: Պատմական տվյալ ժամանակաշրջանի իրադարձություններն իրենց արտացոլումն են գտել միջնադարի մեր մի շարք պատմիչների գործերում, բայց Ծերենցի համար որպես հիմնական սկզբնաղբյուր ծառայել են Մատթեոս Ուռհայեցու և նրա երկը շարունակող Գրիգոր Երեցի «Ժամանակագրությունն» և Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը» (Ծերենց, 1985, էջ 16):

Ծերենցի վեպերին վերաբերող աղբյուրագիտական նյութերի ու-

շաղիր քննությունը ցույց է տալիս, որ վիպասանը թեև օգտվել է հիշատակված երկու հիմնական սկզբնաղբյուրներից, սակայն պատմության քննական գիծը պահպանելու համար հատկապես կողմնորոշվել է Ղևոնդ Ալիշանի «Շնորհալի եւ պարագայ իւր» աշխատությամբ: Սույն մենագրության գրեթե կեսը նվիրված է Ներսես Շնորհալու կենսագրությանը, ուր Ալիշանը, ի մի բերելով հայ պատմիչների թողած տվյալները, ինչպես նաև օտար սկզբնաղբյուրների հիման վրա տալիս է այնպիսի մեկնաբանություններ ու բերում այնպիսի փաստեր, որոնք հնարավորություն են տալիս առավել ամբողջական պատկերացում կազմել թե՛ Ներսես Շնորհալու, թե՛ Թորոսի ապրած ժամանակաշրջանի, և թե՛ Կիլիկյան Հայաստանի մասին:

Ծերենցի համար աղբյուրագիտական հիմք է ծառայել նաև 1850 թ. «Արարատ» ամսագրում «պատմական» խորագրի տակ շարունակաբար տպագրվող «Յեղափոխութիւն Կիլիկիոյ» գեղարվեստականացված պատմագիտական նյութը, ուր մանրամասն ներկայացվում է Թորոսի փախուստը Կոստանդնուպոլսից Կիլիկիա: Անշուշտ, Ծերենցին մեր պատմագրությունը հսկայական նյութ է տվել, սակայն, ինչպես իրավացիորեն նշում է գրականագետ Չ. Ավետիսյանը, «փաստի գեղարվեստական քննության ու վերացարկման համար Ծերենցը ժամանակ չուներ» (Ավետիսյան Չ., 1986, էջ 63), քանի որ այդ տարիներին նա արևմտահայ մտավորականության հետ միասին փորձում էր Կիլիկիայում համախմբել թուրքական բռնապետության պայմաններում ապրող ընկճված հայությանը և հիշեցնել նրանց Կիլիկյան Հայաստանի փառավոր անցյալի մասին: Այս իսկ պատճառով Ծերենցը աշխատում էր, որքան հնարավոր է շուտ հրապարակ հանել իր առաջին՝ «Թորոս Լևոնի» վեպը, որի ստեղծման շտապողականությունն էլ վիպասանին ստիպում է կառչել պատմության պատրաստի փաստերին¹:

«Թորոս Լևոնի» վեպում Ծերենցն ասես ջանում էր ցույց տալ, որ նկարագրվող դեպքերն ու դեմքերը պատմական ճշմարտացի իրողություններ են, այլ ոչ թե սոսկ գեղարվեստական երևակայության արդյունք: Ճիշտ է, ի տարբերություն Բաֆֆու, նա հաճախ է դիմում պատմական աղբյուրներին և ուշադիր հետևում պատմական դեպքերի ժամանակագրությանը՝ ժամանակ առ ժամանակ սյուժեի ընթացքը ընդհատելով, փաստական հավաստի աղբյուրներից մեջ-

¹ Այս մասին մի շարք ակնարկներ կան վիպասանի դստեր՝ Թագուկի օրագրերում (Շիշմանյան Թ. (Օր. Մենիկ), 2015, էջ 156, 164):

բերումներ է անում «այստեղ պատմիչը կըսե» և այլ սկզբածքներով, բայց դրանով դեռևս չի լուծվում պատմավիպասանության գեղարվեստական ճշմարտացիության հարցը: Եթե համեմատենք «Թորոս Լևոնի»-ն Րաֆֆու վեպերի հետ, կտեսնենք, որ այն ծավալով փոքր է նրանցից, միևնույն ժամանակ ընդգրկումով ավելի հարուստ է:

«Թորոս Լևոնի» վեպը Ծերենցը սկսում է վիպական իրադարձությունների սկզբնավորման ճշգրիտ թվականը նշելով (1142) և Կոստանդնուպոլսից Թորոսի փախուստի պատմությամբ:

Հայոց թագաժառանգի Բյուզանդիայից փախչելու մասին Սմբատ Սպարապետն իր «Տարեգիրք»-ում (Սմբատ Սպարապետ, 1956, էջ 164), իսկ Մատթեոս Ուռհայեցին իր «Պատմութիւն» աշխատութեան մեջ (Մատթեոս Ուռհայեցի, 1869, էջ 597) նույնությամբ նկարագրում են փախուստի փաստը, բայց ոչ հանգամանքները, որոնք վեպի համար չափազանց կարևոր են: Ծերենցը հենց այստեղ, օգտվելով Ալիշանի մի ակնարկից (Դեռևս Ալիշան, 1873, էջ 286-287), ինչպես նաև ծանոթ լինելով 1850 թ. «Արարատ»-ում տպագրված «Յեղափոխութիւն Կիլիկիոյ» վերտառությամբ պատմությանը, գործի է դնում իր գեղարվեստական երևակայությունը՝ ստեղծելով փախուստը կազմակերպող հերոսների՝ Եվփիմեի և Ալեքսիսի կերպարները, ուղադրություն դարձնելով պատմության ընձեռած նվազագույն հնարավորությանը:

«Արարատում» խոսվում է այն մասին, որ Չապել անունով մի ազնվատոհմիկ աղջիկ, որի հայրը Ստամբուլում «հունաց Արխոնտայից կարգում երևելի էր ազնվականությամբ և հարստությամբ», 5000 ոսկի է տալիս Թորոսին, որպեսզի նա զորք հավաքի և պայքարի Կիլիկիայի ազատագրման համար: Ըստ այդ պատմության՝ Չապելը ամուսնացած էր մի հույն զորապետի հետ, որը կայսրուհու մերձավոր ազգականն էր: Հոր և ամուսնու մահից հետո նա դառնում է երկու հարուստ ընտանիքների ժառանգորդը: Չապելը և հայոց թագաժառանգը ծպտվում են նավի մեջ և փախչում Կիլիկիա («Արարատ», 1850, թ. 14, էջ 219-222; 1851, թ. 17, էջ 262-265): Ծերենցը, օգտագործելով այս պատմական փաստը, վերակառուցել է այն և ստեղծել Եվփիմեի կերպարը. նա ամուսնացած չէ, բյուզանդական ծագում չունի, այլ հայուհի է: «Իմ անունս Եվփիմե է,- գրում է Ծերենցը,- իմ հայրս՝ Ալեքսիս, Փոքր Հայոց կուսակալ. երբ Սեբաստիա Հայոց թագավորաց հանձնվեցավ, Արծրունի իշխանի մը աղջկան հետ կամուսնանա, և Պոլիս դառնալեն տարիներե վերջը ես կծնիմ» (Ծերենց, 1957, էջ 23): Իսկ ո՞վ

Էր Ալեքսիսը: Մ. Ուռհայեցին գրում է. «Եւ դնեն զթագն ի գլուխ իշխանի մի՝ որում անուն ասէին Ալեքս, որ Էր եղբորորդի Կոմանոս թագաւորին, այր բարի եւ աստուածասէր և քաջ ընդդէմ պատերազմաց. եւ յայնժամ լինէր խաղաղութիւն տանն Յունաց» (Մատթեոս Ուռհայեցի, 1869, էջ 260-261): Սմբատ Սպարապետի վկայությամբ Էլ Ռոմանոսի եղբորորդին Էր և «...այր բարի և աստուածասէր և քաջ ի պատերազմունս, և եղէն խաղաղութիւն տանն Յունաց» (Սմբատ Սպարապետ, 1956, էջ 85): Ղևոնդ Ալիշանի վկայությամբ՝ սա հայասէր Էր և շատ Էր կապկած Ներսէս Շնորհալու հետ. «Ալեքսի չափաւորութիւն և խոհեմութիւնն՝ զթորոս ալ չափու մէջ պահած Էր, և իրարու առիթ չտալով՝ բարեկամութեամբ կը վարուէին, և Թորոս դեռ կայսեր բարձրագոյն հովանաւորութեան ներքև համարուէր» (Ղևոնդ Ալիշան, 1873, էջ 321): Այս փաստերի հիման վրա Էլ Ծերենցը հորինել է իր ճշմարտանման պատմությունը: Ըստ Նրա Ալեքսիսը ամուսնացած է եղել Արծրունյաց գերդաստանից մի ազնվատոհմիկ աղջկա հետ, որը և դարձել է Եվփիմեի մայրը: Իսկ արքունական ծագումն օգտագործելով՝ Եվփիմեն իրոք կարող էր բարոյապէս և նյութապէս աջակցել գերության մեջ գտնվող հայոց իշխանին:

Թորոսի փախուստը կազմակերպելու գործում լուրջ դերակատարում է ունեցել Եվփիմեի խնամակալ Դիոնիսը: Ըստ Ծերենցի՝ հենց Նա կարող էր կազմակերպել Թորոսի փախուստը, քանի որ «...կորովի սիրտ ունէր և մեծահանճար գլուխ մը» (Ծերենց, 1957, էջ 32): Ալիշանի վկայությամբ՝ Դիոնիսը պատմական անձնավորություն է, որն աջակցել է Թորոսին Մարաշա երկիրը գրավելիս, իսկ երբ Թորոսը թողնում է բերդը և հեռանում, իր հետ տանում է Նաև բերդի քրիստոնյա բնակիչներին: Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ Դիոնիսը դեպքերին մասնակից է դառնում շատ ավելի ուշ, երբ Թորոսն արդեն Սև լեռների կողմերն էր: Մինչդեռ Ծերենցի վեպում Նա հանդես է գալիս հենց սկզբից և իր հնարամտությամբ է կազմակերպում փախուստը: Թե՛ մեր պատմիչները և թե՛ Ծերենցը Թորոսի անցած ճանապարհը նկարագրում են Նախ՝ Բյուզանդիայից Կիպրոս, ապա՝ Կիլիկիա. «Նախ Նաւեց ելաւ ի Կիպրոս,- գրում է Ալիշանը,- անտի մտաւ ի Կիլիկիա. քահանայի մը յայտնեց զինքը, որ ատեն մը քովը պահեց, իբրև ծառայ կամ հովիւ...» (Ղևոնդ Ալիշան, 1873, էջ 288): Ծերենցը տեղում դեպքերը այնպէս է ներկայացնում, որ Կիլիկիայում Թորոսի առ ժամանակ պատսպարվելը անհրաժեշտություն էր, մանավանդ որ Նա այստեղ տեղի հայ

բնակիչների աջակցությամբ պիտի մշակեր Կիլիկիայի ազատագրման ռազմական պլանը:

Վեպում Ծերենցը կենտրոնախույս իշխանության, դավաճան և օտարամոլ նախարարների դեմ ներքին լուռ բանավեճ մղելու նպատակով վիպական հյուսվածք է ներքաշում Անարգաբա քաղաքի գրավումը և նրա տիրոջ՝ Սմբատի պատմությունը: «Իսկ կինն Ստեֆանեի, դուստր էր պարոն Սմբատայ տեառն Պապեռոսին, եղբոր Օշին, Լամբրունին տիրոջն, և քոյր Բակուրնայ որ տիրեաց Պապեռոսին, յետ սպանմանն Սմբատայ հորն իւրոյ, ի զօրացն Թորոսի» (Սմբատ Սպարապետ, 1956, էջ 187),- գրում է պատմիչը, որի հաղորդած տեղեկության հիման վրա էլ Ծերենցը ստեղծել է Մարգրիտի կերպարը, որ Թորոսի եղբոր՝ բյուզանդահպատակ Ստեփանեի կինն էր և Սմբատի դուստրը: Վերջինս հեղաշրջում է հոր զորքերը, միանում է Թորոսին, ապա ամուսնանում է թագավորի եղբոր հետ: Մինչդեռ պատմության մեջ Մարգրիտը և Ստեփանեն ամուսնացած են եղել մինչ Թորոսի Կիլիկիա վերադառնալը:

Մատթեոս Ուռհայեցին գրում է, թե երբ Անդրոնիկոսը մտավ Կիլիկիա, Թորոսը ընդառաջ գնաց և հաշտության առաջարկ արեց նրան՝ պայմանով, որ նա ձեռք չտա իր պետական իրավունքներին. «Իսկ Թորոս բազում աղաչանօք աղաչեր գնա, թե «Ճորտ եմ թագաւորին և քո, մի՛ բարկանար»: Իսկ Նոքա ձայնէին ի ներքս ի քաղաքն, թե «Չերկաթն որով զքո հայրն տարաք, ի հետ ունիմք, որով զքեզ կապեալ տարցուք» (Մատթեոս Ուռհայեցի, 1869, էջ 507-508): Ծերենցն անդրադառնում է Թորոսի այս խոսքերին և վերջինիս առաջարկի մեջ դնում է սեփական հղացումը, նրա հերոսը այսպես է մեկնում իր քայլը. «...հայ ազգին օգուտը կը պահանջե, որ հունաց հետ եղբայրաբար երթանք, անոնց նիզակակից լինինք ընդդեմ այն թշնամյաց, որ զմեզ կը շրջապատեն և օրավուր կը զորանան...» (Ծերենց, 1957, էջ 149):

Երբ Անդրոնիկոսը ամբարտավանությամբ մերժում է Թորոսին, վերջինս հարձակվում է քաղաքի վրա և հաղթությամբ ավարտում պատերազմը հունաց դեմ: Թե՛ Մատթեոս Ուռհայեցին, թե՛ Սմբատ Սպարապետը և թե՛ Ղևոնդ Ալիշանը նկարագրում են այդ պատերազմի ողջ ընթացքը (Մատթեոս Ուռհայեցի, 1869, էջ 508-509; Սմբատ Սպարապետ, 1956, էջ 170-171; Ղևոնդ Ալիշան, 1873, էջ 290-291), սակայն, ինչպես նշում է Ա. Տերտերյանը Ծերենցն իր նկարագրությամբ գերազանցում է նրանց (Տերտերյան Ա., 1944, էջ 92):

Վիպասանն օգտագործել է նաև Ալիշանի հաղորդած այն տեղեկությունը, թե բյուզանդացիները մեծամտաբար պահանջում էին վճարել իրենց փրկագինը և ազատվել գերությունից. «Թորոս ալ գիրենք աւելի զկծելու համար թողուց որ իրենք իրենց գին կտրեն. Յոյնք ազահութեամբ՝ իրեն թողուցին որ արծեքնին իմացընէ: Թորոս ըսաւ, եթե բան մ'արծեիք՝ և ոչ կը հաւանէի զծեգ թողուլ: Ասկէ աւելի ամըցած՝ իրենք իրենց որոշեցին ծանր գիներ, որ անձնանախատ չսեպուին, և ազատեցան» (Ղեւոնդ Ալիշան, 1873, էջ 291): Պատմական այս փաստը Ծերենցի գրչի տակ գեղարվեստական երանգավորում է ստացել. «Հոռոմ իշխանքը, որ այսպիսի առաջարկություն երբեք չէին սպասեր, զարմանքով իրարու երես սկսան նայիլ շփոթած: Լսված էր մինչև այն օրը թե երբեք կալանավոր ոք իր փրկանաց գինն որոշէ. պզտիկ արծեք մը տալ անձանց՝ իրենց մեծամտության կը դպչեր, գինը բարձր բռնել՝ հունական ամբարտավանությունը գոհ կընէր, բայց պետք էր վճարել, ուստի դարձյալ փախուստ տալով առաջարկեցին, որ ինք գին կտրեն: Իսկ Թորոս կերպը փոխելով՝ լի արհամարանոք՝

- Եթե բան մը արծեիք, զծեգ չէի թողուր, որ երթաք,- ըսավ և դառնալով յուրայնոց.- տարեք այս իշխանները, որ իրենց արժանյաց վրա մտածեն, մենք բավական զբաղմունք ունինք հիմա և պետք չէ ժամանակ կորսնցնել» (Ծերենց, 1957, էջ 156):

«Թորոս Լևոնի» վեպի դրամատիկ և հակասական կերպարներից են Ստեփանե և Մլեհ եղբայրները, որոնց մասին մանրամասն տեղեկություններ են տալիս մեր պատմիչները: Ե՛վ Ուռհայեցին, և՛ Սմբատ պատմիչը հատկապես կանգ են առնում Ստեփանեի դավադրաբար սպանվելու փաստի վրա: Ըստ Սմբատ պատմագրի՝ Ստեփանեն սպանվել է «դավով նենգութեամբ... խաչելու ի կատսայ» (Սմբատ Սպարապետ, 1956, էջ 186), իսկ ըստ Ուռհայեցու՝ «խեղդամահ արարին զայնպիսի քաջ և երեւելի զօրականն քրիստոնէից» (Մատթեոս Ուռհայեցի, 1869, էջ 546): Ծերենցը, օգտնվելով մեր պատմիչների աշխատություններից, Ստեփանեին նախ պատկերում է որպես քաջ և վճռական զորավարի, ապա սպանության դրվագը նկարագրելիս հետևում է Սմբատ պատմագրին. «Անդրոնիկոս Եվփորպեն... ճաշի հրավիրելով զՍտեփանե, Համուս բերդը եռացյալ ջրո կաթսայի մը մեջ գինքն սպաննել տվավ» (Ծերենց, 1957, էջ 177): Վիպասանն օգտագործել է նաև պատմիչների այն վկայությունը, որ հակառակ միմյանց միջև գոյություն ունեցող տիրակալական հակասությունների՝

Թորոսը և իր եղբայր Մլեհը Ստեփանեի համար վրեժխնդիր են լինում. «Իսկ եղբայր Նորա Թորոս և Մլեհն, զայրացեալ ընդ գործ Նենգաւորացն, առին զվրեժ արեան Նորա յանմեղ Յունաց հազարապատիկ, որոց արեանցն պատուական տուկն էր» (Սմբատ Սպարապետ, 1956, էջ 186):

Պատմիչների մոտ Մլեհը ներկայացված է քաջ, անգիշում և «պատերազմասեր» իշխան, որը, սակայն, օժտված էր բնավորության բացասական գծերով: Անանուն Եդեսացին գրում է. «Կիլիկիայի իշխանը, որի անունն էր Մլեհ, բռնությամբ ու դաժանությամբ էր կառավարում: Նա իր ամբարշտությամբ գերազանցեց ոչ միայն քրիստոնյա անօրեն իշխաններին, այլ նույնսիկ մահմեդական և հեթանոս բռնակալներին» (Անանուն Եդեսացի, 1982, էջ 135): Սմբատ սպարապետը գրում է, որ Նա պատրաստվում էր սպանել եղբորը՝ իշխանությունը գրավելու համար. «Մլեհն էր այր չարաբարու և անագորոյն, և խորհեցաւ սպանանել զեղբայրն իւր զԹորոս» (Սմբատ Սպարապետ, 1956, էջ 186): Իսկ Ալիշանը, Մլեհին համեմատելով Ստեփանեի հետ, գրում է. «Մլեհ շատ անելի պակաս ի զգօնութենէ և ի հաւատարմութենէ առ մարդ և առ Աստուած. բազկաց և սրտին ոյժը՝ իշխանասիրութեամբ, բռնութեամբ և բռնաբարութեամբ արատեց» (Ղեւոնդ Ալիշան, 1873, էջ 305): Ի տարբերություն իր եղբայրների՝ Թորոսն ինչպես վեպում, այնպես էլ պատմական աղբյուրներում, սկզբից միևնույն վերջ հանդես է գալիս որպես հայրենասեր և հաշտարար: Առհասարակ մեր պատմիչները շատ են ընդգծում Թորոսի խաղաղասիրությունը, դիվանագիտական կարողությունը և ասպետությունը, մի բան, որ Ճերենցի համար կողմնորոշիչ է եղել հայոց թագավորի կերպարը կերտելիս: Ըստ Սմբատ Սպարապետի բնութագրման՝ Թորոսը «այր իմաստուն է և կիրթ և վարժ և կորովի ի պատերազմունս, և քաջասիրտ և մեծախորհուրդ, և առ ամենայն կարիս քրիստոնեից յոյժ պիտանի, և առատաձեռն, և ամենայն բարի տեսակօք լի» (Սմբատ Սպարապետ, 1956, էջ 178): Թորոսի այս բնութագրական գծերը, հոգու գեղեցկությունը, երկրին ու ժողովրդին նվիրված լինելու փաստը երևում է վեպի մի շարք հատվածներում. «Մեր պարտքը մեր ժողովուրդը զորացնել և աղել կառավարելն է,- ասում է Թորոսը Մլեհին,- օգնենք իրարու, սիրենք մեկգմեկ, ըլլանք մեկ սիրտ, մեկ հոգի, զորացնենք, շատցնենք մեր ժողովուրդը, բնակինք լեռները, ուր մեր ցուրտ երկրին բնիկ հայը կորովի և քաջ կը լինի. օրը հեռու չէ, որ դաշտը մերինն է, գիտնանք

համբերել և մեր փառասիրությունը չափավորել» (Ծերենց, 1957, էջ 142): Իսկ վեպի վերջում մեռնելուց առաջ, հրաժեշտի խոսքեր, մաղթանքներ ու խորհուրդներ էր տալիս հարազատներին, հայ իշխաններին ու ժողովրդին. «Ուրեմն սիրով եղեք, միաբան եղեք իրարու հետ, ազգին համար, ձեզի համար...» (Ծերենց, 1957, էջ 205): Արքայի այս խոսքերով էլ Ծերենցն ավարտում է իր վեպը:

«Թորոս Լևոնի» վեպում Ծերենցն օգտագործել է Նաև Կիլիկիայի հին հայերի երգերից երկուսը, որոնց առնչությամբ 1878 թ. Ծերենցին ուղղված մի սամակում Ղևոնդ Ալիշանի արժանավոր հնագետ եղբայրը՝ «Քաբա Ալիշանը», գրում է, թե հավանել է «Թորոս Լևոնին», բայց հորդորում է ոտանավորներ չմտցնել վեպերի մեջ. «ուրիշ անգամ ոտանավոր մի՛ մուծաներ... պատմե զգացմունս, այլ ոչ վիպասանաբար քերթե...»: Սերովբե Ալիշանի այս խոսքերին ի պատասխան՝ Ծերենցի դուստր Թագուկը հոր հանձնարարությամբ գրում է. «-Երգողը ես չ'եմ, այլ գաղթականներն են որ Կիլիկիա կը հասնին ու կ'երգեն, ժողովուրդն է որ զՌուբեն կ'երգե, մեջ երգը անցելույն» (Շիշմանեան Թ. (Օր. Մենիկ) 2015, էջ 170): Վիպասանը նկատի ուներ Ռուբինյան իշխանության հաստատման շրջանից մնացած Ռուբեն Ա.-ի մասին տարածված երգերը:

«Սև լեռներ, սև լեռներ,
Ձեր գտլուխներ է համպերե մըթընցեր,
Դուք, ամպեր, սև ամպեր,
Ուսկից՞ կուգաք, ո՛վ ամպեր,
Ինչո՞ւ մութ եք, ո՛վ ամպեր...» (Ծերենց, 1957, էջ 55):

Ծերենցը բերել է Ռուբեն իշխանի մասին ժողովրդական մի այլ՝ «Երգ Ռուբենի», որի մեջ ասվում է.

«Ի դառն հողմոց արտասահման հայրենական մեր երկրեն,
Օտար դաշտեր՝ Սև լեռներու պանդուխտ եղաք տարադեն.
Չի կար Մովսես, ոչ զորավար և սյուն լուսո ուղեցույց,
Մեզ զորավար և սյուն լուսո արքայական արմատեն՝
Ընծյուղ պատվո՝ հույս ծագեցավ քաջն ու արին մեզ Ռուբեն...»

(Ծերենց, 1957, էջ 96):

Այս նույն ոգով էլ Ծերենցը նկարագրում է Կիլիկյան աշխարհը, երբ վերջապես խաղաղություն է տիրում Թորոսի երկրի վրա:

Ինչպես տեսանք, «Թորոս Լևոնի» վեպում դեպքերի և դեմքերի մեծամասնությունն ունի իր պատմական հիմքը, ինչը գնալով համե-

մատաբար պակասում է մեր հետազայ շրջանի պատմավեպերում:

«Երկունք Թ. դարում» պատմավեպը Ծերենցը գրել է առաջին վեպից անմիջապես հետո, որի գոյության համար, ինչպես պրոֆ. Ալ. Մակարյանն է նշում, հայ գրականությունը մեծապես պարտական է նրա դստերը՝ Թագուկին (Շիշմանեան Թ. (Օր. Մենիկ) 2015, էջ 11): «Երկունք...»-ում ծավալվող իրադարձությունների հենքը պատմականորեն միանգամայն հավաստի է: Որպես պատմական սկզբնաղբյուր՝ Ծերենցին ուղենիշ է ծառայել նկարագրվող դեպքերին ժամանակակից Թովմա Արծրունու «Արծրունյաց տան պատմությունը» աշխատությունը, որտեղ, ի տարբերություն մեր նախորդ և հետագա շրջանի պատմիչների, առավել մանրամասն է ներկայացված ժողովուրդը, նրա պատմական դերը: Վիպասանն օգտվել է նաև Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմություն հայոց» աշխատությունից:

Խաչատուր Աբովյանի «Վերք»-ից հետո Ծերենցն առաջինն էր, որ վիպագրության կենտրոնը դարձրեց աշխատավոր ժողովրդից ելած շարքային մարդը, նրան տվեց պատմության գլխավոր հերոսի դերը և նրան վերագրեց հերոսականության, ազգասիրության ու առաքինության բարձր հատկանիշներ: «Երկունք»-ը այն բացառիկ երկերից է, գրում է ակադեմիկոս Ս. Սարիսյանը, որոնք հատկանշվում են պատմականի և գեղարվեստականի սերտ միասնությամբ, ուր ինչքան հավաստի և ամուր է պատմական հիմքը, նույնքան էլ հիասքանչ ու ներդաշնակ է գեղարվեստական հյուսվածքը» (Սարիսյան Ս., 1966, էջ 434): Պատահական չէ, որ Ծերենցն իր վեպի հիմքը դարձրեց Թովմա Արծրունու պատմությունը՝ նկատի ունենալով, որ Արծրունին մեր պատմագիրների մեջ ամենից ժողովրդասերն է, որը որոշակի ուշադրություն է դարձրել ժամանակի մարդկանց ոչ միայն անհատական խառնվածքին ու գործունեությանը, այլև նրանց կենցաղային սովորություններին, ինչը չենք կարող տեսնել Վ. դ. պատմագրության մեջ (հիշենք այդ առիթով Բաֆֆու դժգոհությունը (Բաֆֆի, 2021, էջ 75-76)):

Ծերենցի վեպում պատմական իրադարձությունները, դեպքերը, գլխավոր կերպարները և պատմական ատաղձը հիմնականում համընկնում է պատմիչների աշխատություններին: Սակայն «Երկունք...»-ը սոսկ պատմության վերարտադրություն չէ և վիպասանից ամենևին չի պահանջում, որ նա, ինչպես Բելինսկին է ասում, դառնա «պատմության ստրուկը» և իր վեպը կառուցի ճիշտ այն դեպքերի

ու իրադարձությունների հաջորդականությամբ, ինչ-որ պատմիչների մոտ է. «Աղբյուրների պարունակած փաստերը ոչ այլ ինչ են, եթե ոչ քար և աղյուս. միայն գեղագետը կարող է շենք բարձրացնել այդ նյութից» (Բելինսկի Վ., 1948, էջ 474),- գրում է Բելինսկին: Ծերենցը իր վեպի հենց սկզբից Թովմա Արծրունու աշխատությունից (Թովմա Արծրունի և Անանուն, 1978, էջ 137-138) ներմուծել է սասնա ժողովրդի կյանքն ու կենցաղը ներկայացնող մի շարք փաստեր. «Բուքը օդի մեջ շրջմովի կը հոլովեր, մարդ ձյուններու մեջ կելներ, կիջներ, կը սողար, կը սահեր և այնպիսի եղանակին այնպիսի շարժումը ընել այն լեռնաբնակ ժողովուրդը միայն կրնար, ժողովուրդ՝ որ ցրտին սաստկության և ամառվան տաքության դեմ միևնույն բուրդե զգեստը միայն ուներ և այծի մորթե կոշկածն օդ ոտից. գարի և մանավանդ թե կորյակ իրեն հացը կը մատակարարեին, վասնզի այդ բարձրությունն և ժայռերուն հողի սակավությունն այն միայն կուտար իրենց աշխատությանը և սաստիկ տառապանաց: Իրենց բնակությունները հեռի էին ի միմյանց, և այդ պատճառով շատ անգամ իրարու լեզուն հագիվ թե կիմանային, և լեզու թեպետ հայ, բայց օտարացյալ կը համարվեր ի շրջակայից, և թարգմանի կարոտ իմանալի լինելու համար» (Ծերենց, 1957, էջ 209):

Ժողովրդի կենցաղն ու սովորույթները նկարագրելուց հետո վիպասանը շարժման մեջ է դնում վեպի գլխավոր հերոս Հովնանին: Դեպքերի ականատես Թովմա Արծրունին պատմում է, թե ինչպես 851 թ. արաբ ոստիկան Յուսուֆը (Հովսեփ) նենգությամբ ձերբակալում է Տարոնի իշխան Բագարատ Բագրատունուն և գերի ուղարկում խալիֆին: Սասունցիները խուսեցի Հովնանի գլխավորությամբ, իջնում են լեռներից, մտնում Մուշ, սպանում են Փրկչի եկեղեցու գմբեթում ապաստանած Յուսուֆին՝ ապստամբության դրոշ բարձրացնելով արաբական խալիֆայթի դեմ (Թովմա Արծրունի և Անանուն, 1978, էջ 136-137):

Բագարատ իշխանի գերեվարման և խուսեցիների ապստամբության մասին հիշատակություն կա նաև Հովհաննես Դրասխանակերտցու մոտ. «Երբ նա հասնում է Տարոն գավառը, իսկույն շղթայակապ անելով Բագարատ իշխանին, տանել է տալիս ամիրապետի մոտ... Բայց Տավրոս լեռան բնակիչները իրենց խառնակ բնավորության պատճառով հավաքվելով մի վայրում, սպառնալիքներով ու գայթակղվելով, խմբովին հանկարծակի հարձակվում են նրա վրա և

սպանում ուստիկան Աբուսեթին՝ լուծելով Բագարատ իշխանի վրեժը» (Հովհ. Կաթողիկոս Դրասխանասկերտցի, 1996, էջ 121): Այս դրվագը ներկայացնելիս Ճերենցն օգտվել է ականատես Թովմա Արծրունու աշխատությունից. «...այդ անհավատ արաբը... Բագարատը, զավկները, ընտանիք, ամենքը շղթայեց, դրկեց Արաբստան» (Ճերենց, 1957, էջ 212): «Երբ իրեն (Յուսուֆին) իմացուցին թե «գազանաբարո և արյունարբու» լեռնցիք քաղաքը պաշարեր ներս են մտեր, շփոթութենեն թողուց պալատը, փախավ, վազեց մտավ Փրկչի եկեղեցին, և միևնույն գմբեթին մեջ ելավ... Երբ սասնցի խումբը պաշարեց գեկեղեցին, և մտնելով ոմանք գմբեթին մեջ և մերձենալով՝ մեկը նիզակով կոնկեն զարկավ և թևին տակեն թոքերն հանելով սատակեց» (Ճերենց, 1957, էջ 216):

Թովմա Արծրունու աշխատությունից են գալիս «Երկունք...»-ի ոչ միայն համաժողովրդական պայքարի տեսարանների, Յուսուֆի ու Բուդայի վայրագությունների նկարագրությունների, մի շարք հայ իշխանների վարքագծի ամենաընդհանուր բնութագրումների, հուլիսի Հովնանի ու Գուրգեն Արծրունի Ապուլայեճի հերոսական կերպարների, այլև սասունցիների յուրահատուկ կենցաղի, պատմական բազմաթիվ այլ երևույթների ու իրադարձությունների պատմական հիմքերը: Վեպի «Աշոտ Արծրունի և դավաճանք», ապա «Դատաստան» գլուխներում Մուշեղ և Վահրամ իշխանների և Վահրամ թիկնապահի դավաճանության, Բուդային ուղղված նրանց նամակի նկարագրության էջերը, որոնք առաջին հայացքից գեղարվեստական երևակայության արդյունք են թվում, իրենց պատմական հենքով նույնպես գալիս են Թովմա Արծրունուց:

Համանման գծեր կան նաև «Երկունք...»-ի և հայ ժողովրդական էպոսի՝ «Սասունցի Դավիթ»-ի մեջ: «Երկունք...»-ում պատկերված է հայ ժողովրդի մղած հերոսական պայքարը արաբ նվաճողների դեմ՝ հանուն ժողովրդի ազատության և ազգային ինքնության վերականգնման: «Սասունցի Դավիթ» էպոսում հայ ժողովուրդը նույնպես պայքարում է արաբ բարբարոսների դեմ, որոնք բռնի կերպով ձգտում էին իրենց տիրապետությունը հաստատել Հայաստանում: Թե՛ էպոսում, և թե՛ «Երկունք...»-ում տրված են արաբական լծի տակ երկար ժամանակ տառապած ժողովրդի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի արհավիրացի պատմությունը:

Մուրացանի «Գևորգ Մարգարետունի»-ն ևս պատկերում է հենց

այս ժամանակաշրջանի իրադարձությունները: Որպես պատմավիպասան՝ Մուրացանը ավելի ուշ հանդես եկավ, քան Ծերենցը: Հետևաբար Մուրացանը նախքան իր պատմավեպը գրելը ուսումնասիրել է Ծերենցի «Երկունք...»-ը, ոգևորվել այդ վեպում արտահայտված ազատասիրական, հայրենասիրական գաղափարներով և պատկերել է արաբական բռնակալության կրնկի տակ հեծող հայ ժողովրդի մղած վերջին և վճռական պայքարը ժողովրդի ինքնությունը և ազգային գոյությունը պահպանելու գործում: Վեպի գլխավոր հերոս Գևորգ Մարգպետունու և Հովսեփի հայրենասիրական գործունեության մեջ էական տարբերություն չի նկատվում: Նրանք երկուսն էլ անձնագոհ հայրենասիրության, ազգային արժանապատվության բարձր գիտակցությամբ օժտված անհատներ են, որոնք հասկանում էին պատմական հիշյալ ժամանակաշրջանում ստեղծված բարդ իրադրությունը:

Այսպիսով՝ թե՛ «Սասունցի Դավիթ» էպոսում, թե՛ «Երկունք...» և թե՛ «Գևորգ Մարգպետունի» վեպերում որոշ տարբերությունների հետ միասին նկատվում է մի ընդհանուր գաղափարական գիծ. այն է՝ հայ ժողովուրդը տարբեր դարաշրջաններում ուղքի է կանգնում ներքին և արտաքին թշնամու դեմ կործանման եզրին հասցված հայրենիքը փրկելու համար:

Ինչպես տեսանք, Ծերենցը, օգտագործելով փաստական ճշգրիտ տվյալները, իր ստեղծագործական երևակայության և արվեստի ուժով գեղարվեստորեն ներկայացրել է դեպքերը, ստեղծել է գեղարվեստական կերպարներ, տվել է ժամանակաշրջանի մարդկանց սոցիալ-հոգեբանությունը և դարաշրջանի հասարակական կյանքի բուն էությունը: Նրան հաջողվել է ոչ միայն ճիշտ դիտանկյունից քննել և ուսումնասիրել պատմական իրողություններն ու առանձին երևույթները, այլև թափանցել նրանց էության մեջ, կենդանացնել այդ փաստերը և նրանցից ստեղծել մի կատարյալ արվեստի գործ: Հենց սրա մեջ է իսկական արվեստագետի, մասնավորապես պատմավիպասանի մեծությունը: Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է ակադեմիկոս Ս. Սարիսյանը. «Ծերենցը ավելի շուտ պատմության փոխհամակարգ է, քան նրա տարեգիրը, այս իմաստով էլ վեպում անշուշտ գեղարվեստական իշխում է պատմականին» (Սարիսյան Ս., 1966, էջ 434):

«Թեոդորոս Ռշտունի» վեպի նյութը վերցված է մեր ժողովրդի պատմության VII դարի իրադարձություններով հարուստ շրջանից:

Պատկերվող դարաշրջանը Ծերենցը նույնքան խորն է ուսումնասիրել, որքան «Երկունք Թ դարու» վեպում: Դրան մեծապես նպաստել է նաև 1843 թվականին դեպի պատմական Հայաստան կատարած ճանապարհորդությունը: Եթե «Երկունք...»-ում վիպասանը գեղարվեստորեն պատկերում էր արաբական լծի թոթափումը և հայկական պետականության վերականգնումը (IX դար), ապա «Թեոդորոս Ռշտունի» վեպում փոթորկալի անցքերով լի դարաշրջանի պատմությունը սկսում է արաբական ծանրատար լծի երևան գալով (VII դար): Պայքարը կազմակերպող ու ղեկավարող հիմնական դեմքը հայոց ինսամակալ սպարապետ Թեոդորոս Ռշտունին էր:

Արաբական առաջին արշավանքները Հայաստան նկարագրել են Ղևոնդ պատմիչը, Սեբեոսը, Հովհաննես Դրասխանակերտցին, Սամվել Անեցին և այլք: «Թեոդորոս Ռշտունի» վեպը գրելիս Ծերենցը հատկապես օգտվել է VII դարի պատմիչ Սեբեոսի «Պատմություն» և VIII դարի պատմիչ Ղևոնդի «Պատմություն» աշխատություններից: Ասել է թե՛ վեպի պատմական հենքը միանգամայն հավաստի է: Վավերական են Հայաստանի երկու մասերի միավորումը և ինքնուրույնության վերականգնումը, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի վերելքի ու վայրէջքի դրվագները, հայ, բյուզանդացի ու արաբ պետական գործիչների վարքագծի հիմնական արտահայտությունները, Թեոդորոս Ռշտունու կողմից արաբների հետ դաշինքի կնքումը (652 թ.), ընդհուպ հետագայում նրա գերեվարումն ու մահը: Հավաստի են նաև բյուզանդական պալատական վերնախավի սադրանքները հայերի դեմ (Ծերենց, 1985, էջ 18):

Վեպի հենց սկզբում մենք Թեոդորոսին հանդիպում ենք Բագրատունյաց մեծ տիկնոջ տանը հայ ժողովրդի քաղաքական կացության մասին դատողություններ անելիս: Սակայն, ինչպես իրավացիորեն նկատել է գրականագետ Չ. Ավետիսյանը, վեպի նախադրությունը սկսվում է Սեբեոսի պատմության մեջ արձանագրված այն փաստից, որ Երանելի Կոմիտաս կաթողիկոսի մահից հետո Թեոդորոսը որոշակի քաղաքական նպատակ հետապնդելով հարմար է գտնում փոխարինող կարգել անապատական Զրիստափորին (Ավետիսյան Չ., 1986, էջ 72): «Յայնժամ առաջադրութեամբ Թեոդորոսի Ռշտունեաց տեառն ընտրեցին զոմն անապատական՝ յԱբրահամեան տանէ, որում անուն էր Զրիստափոր: Չնա նստուցին կաթողիկոս, և նա դիպաւ այր հպարտ և ամբարտաւան, որոյ լեզու իւր էր իբրև զսուր տուսեր: Սա

բազում խռովութիւն յուզեաց և արկ սուր ի մէջ ընդ ասպետ և ընդ եղբայր իւր չարախօսութեամբ» (Սեբեոս, 1979, էջ 129): Ըստ Սեբեոսի՝ կաթողիկոսը պիտի միաբանող լինի տրոհվող իշխանավորների մէջ, մինչդեռ պատմիչի ակնարկից երևում է, որ Քրիստափոր կաթողիկոսը այդպիսին չէ: Իսկ Ծերենցի վեպում ըստ Թեոդորոսի՝ այդ անմիաբանության մեղավորը ոչ թե կաթողիկոսն է, այլ հենց իրենք՝ իշխանները. «...Բայց ո՞ւմ է հանցանքը. դարձյալ և միշտ կըսեմ. անաչառ մարդը՝ Քրիստափոր, անարգեցիկք, Նորա լեզուն «սուր սուսեր» է ըսինք (Նկատի ունի Սեբեոսի վերը բերված խոսքերը), չարախոսներ, գրպարտիչներ, սուտ վկաներ բերինք և աստուծո մարդուն կենաց սրբությունը աղտեղել ջանացինք» (Ծերենց, 1957, էջ 494):

Ծերենցը պատմական սկզբնաղբյուրներից վերցրել է ոչ միայն պատմական իրադարձությունների ընդհանուր հենքը, այլև պատմականորեն բնորոշ ստույգ մանրամասներ, որոնք կոչված են հավաստի պատմականություն հաղորդելու վիպական պատումին:

Սեբեոսից վերցրած այդպիսի բնորոշ մանրամասներից է, օրինակ, վեպի ԻԴ գլխում (Ծերենց, 1957, էջ 603) մեջբերված բյուզանդական վերնախավի հակահայկական լկտի քաղաքականությունը բացահայտող Մորիկ կայսեր (582-602 թթ) նամակը պարսից խոսքով Բ արքային. «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն: Բայց ե՛կ, ասէ, ես գիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել: Չի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. և մեք կեցցուք խաղաղութեամբ: Չի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանգչել ոչ լինի» (Սեբեոս, 1979, էջ 86):

Վեպի պատմական հենքի բազմաթիվ իրադարձություններ՝ բյուզանդական պալատի ներքին դավերը, Թումա գորավարի խարդավանքները, Թեոդորոսի կալանավորումն ու ազատումը, հայ-արաբական դաշինքի կնքումը և այլն նույնպես վերցված են Սեբեոսից (Սեբեոս, 1979, էջ 140-147):

Ծերենցն ինչպես իր նախորդ վեպերում, այնպես էլ այստեղ հատուկ ուշադրություն է դարձնում հայերի և բյուզանդացիների կրոնադավանաբանական վեճերին: Վիպասանը շարունակ ակնարկում է, որ Կոստանդին կայսրը, արքայական գործերը թողած, իրեն շրջապատել էր բարձրաստիճան հոգևորականներով և զբաղվում էր հոգևոր գործերով: Նա հատուկ կոնդակով դիմում է հայերին, որպեսզի ընդու-

նեն իրենց դավանանքը: Վեպում հանդես եկող հայոց կաթողիկոսը՝ Ներսեսը, իր հերթին իր շուրջն է հավաքում հայոց նախարարներին և եպիսկոպոսներին՝ բացատրելու գործի վտանգավոր ընթացքը: Նրանք պատասխանում են գրում կայսերը և հրաժարվում նրա առաջարկից: Այդ մասին է վկայում Սեբեոսի աշխատության ԽԶ գլուխը. «Պատճեն պատասխանի թղթոյն եկելոյ ի Հայս ի Հռոմոց թագաւորէն Կոստանդինայ, զոր գրեցին Հայոց եպիսկոպոսունքն եւ կաթողիկոսն Ներսես հանդերձ նախարարաւքն եւ զաւրավարան Թեոդորոսիւ Ռշտունեաց տեառն: Հշմարիտ եւ ուղղադաւան սամակ Նիկիական» (Սեբեոս, 1979, էջ 148): «Հրովարտակին երկար պատասխան մը գրվեցավ,- գրում է Ծերենցը,- ուր հայոց կաթողիկոս, նախարարք և եպիսկոպոսունք կը հայտնենին, թե Նիկիո դավանութենէն ալելի բան մը ընդունիլ իրենց անկարելի էր» (Ծերենց, 1957, էջ 606):

Ինչպես արդեն նշեցինք, Ծերենցը, բացի Սեբեոսի «Պատմութիւն»-ից օգտվել է նաև Ղևոնդի «Պատմություն»-ից: Վեպի Գ գլխում հույն գորավար Պրոկոպիոսի և Թեոդորոսի միջև ծագած վեճի գեղարվեստական նկարագրության հիմքը գալիս է Ղևոնդից. «Չորավարը բարկանալով իշխանի վրա, իր ձեռքում եղած գավազանը նետեց նրա ետևից» (Ղևոնդ, 1982, էջ 21): Ծերենցը, գեղարվեստական շունչ հաղորդելով ասվածին, գրում է. «Պրոկոպիոս կատաղությամբ ետևէն կը նետեր սպարապետական հավազանը, հայիոյանք և նախատինք ժայթքելով հայ իշխանին» (Ծերենց, 1957, էջ 456-457): Ղևոնդից է վերցված նաև վեպի ԺԴ գլխում թշնամիներին թևավոր օծերի նմանեցնելու հիպերբոլիկ պատկերը. «Թեոդորոս իշխանը տեղեկացավ, որ թշնամին հարձակվել է մեր երկրի վրա,- գրում է պատմիչը: Վերցնելով իր զորքը՝ նա կամենում էր ճանապարհի կիրճերը գրավել, սակայն չկարողացավ նրանցից առաջ ժամանել, քանզի թշնամիները, թևավոր օծերի նման, օդաթև արագությամբ հարձակվելով, իրենց ետևում թողեցին հայկական զորքը և առաջանալով ընթացան դեպի Դվին մայրաքաղաքը» (Ղևոնդ, 1982, էջ 22): Վեպի նույն գլխում նկարագրված արաբների հարձակումը Դվինի վրա, ամրոցի գրավումը և ժողովրդի անխնա կոտորածը ևս, գրեթե բառացի ներմուծված է Ղևոնդի աշխատությունից: Իսկ վեպի ԺԳ գլխում նկարագրված բազմաթիվ իրադարձություններ, ինչպես, օրինակ, պահապանների անգուշության հետևանքով արաբների կողմից Արծաի բերդի գրավումը, կոտորածը, ապա Թեոդորոս Ռշտունու վրա հասնելը, արաբների

ջախջախումն ու գերեվարվածների ազատագրումը, որոշ տարբերություններով կան և՛ Սեբեոսի (1979, էջ 145-146), և՛ Ղևոնդի (1982, էջ 23-24) մոտ: Նման դեպքերում Ծերենցը օգտվել է կա՛մ առավել տիպականից, կա՛մ էլ համադրել է երկու պատմիչների տված տեղեկությունները:

Պատմական մի շարք փաստերի հիշատակումներ կան նաև այլ պատմիչների աշխատություններում, որոնց, անշուշտ, Ծերենցը ծանոթ էր: Վեպի ԻԳ գլխում հիշատակված Եգր կաթողիկոսի հունադավանության ընդունումը և բյուզանդական Հերակլ կայսեր կողմից Կողբի աղի հանքերը որպես պարզև ստանալն, օրինակ, առկա է թե՛ Սեբեոսի, թե՛ հետագայում Կիրակոս Գանձակեցու մոտ. «Իսկ Հերակլ կայսրը գալիս է Կարին քաղաքը, ժողով է անում, կանչում է նաև հայոց Եգր կաթողիկոսին: Իսկ նա... գնաց ընդունեց Քաղկեդոնի աղանդը: Կայսրը նրան պարգևեց Կողբի երրորդ մասը և ամբողջ աղահանքը» (Կիրակոս Գանձակեցի, 1982, էջ 52):

Ամփոփելով սույն հոդվածի շրջանականներում կատարված աղբյուրագիտական քննության արդյունքները՝ կարող ենք փաստել, որ Ծերենցն իր երեք պատմավեպերը ստեղծելու համար որպես սկզբնաղբյուր օգտագործել է Սեբեոսի, Հովհաննես Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու, Սմբատ Սպարապետի, Ղևոնդ Ալիշանի, Մատթեոս Ուռհայեցու, Ղևոնդ պատմիչի աշխատությունները: Ծերենցի կողմից պատմիչներից օգտվելու երևույթը, սակայն, բոլորովին չի սահմանափակել նրա ստեղծագործական ինքնուրույնությունը: Որպես ստեղծագործող՝ «պատկառելի վիպասանը» (Պետրոս Ադամյանի բնորոշումն է) ինքնուրույն է և՛ պատմիչներից օգտվելիս, և՛ նրանց բացատրություններին հակադրվելիս, որովհետև երկու դեպքում էլ նա այդ բոլորը ենթարկում է իր ստեղծագործական մտահոդացումներին, վիպական սյուժեների գեղրավեստական ներքին օրինաչափություններին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Անանուն Եդեսացի, Ժամանակագրություն, Թարգմ. բնագրից, առաջ. և ծանոթ. Լևոն Տեր-Պետրոսյանի, (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 12, Ասորական աղբյուրներ, Բ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, 268 էջ:

2. Ավետիսյան 2., Հայ պատմավեպի պոետիկան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ

հրատ., 1986, 359 էջ:

3. Բեյլիսկի Վ., Ընտիր երկեր, Երևան, Հայպետհրատ, 1948, 536 էջ:

4. Թագուհի Շ. (Օր. Մենիկ), Երկեր, Աշխ. Ալ. Ա. Մակարյանի, Երևան, Լաիրի, 2015, 203 էջ:

5. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ներած., թարգմ. և ծանոթ. Վրեժ Վարդանյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1978, 406 էջ:

6. Ճերենց, Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1985, 640 էջ:

7. Ճերենց, Երկեր, Երևան, Հայպետհրատ, 1957, 643 էջ:

8. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Թարգմ. առաջ. և ծանոթ. Վարազ Առաքելյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1982, 351 էջ:

9. Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց Պատմություն, Աշխ. թարգմ. և ծանոթ. Գևորգ Թոսունյանի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1996, 398 էջ:

10. Ղևոնդ, Պատմություն, Աշխ. թարգմ., Ներած. և ծանոթ. Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1982, 182 էջ:

11. Ղևոնդ Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, տպ. Սուրբ Ղազար, 1873, 2-ի-2, 538 էջ:

12. Մատթեոս Ուռհայեցի, Պատմություն, յերուսաղեմ, տպ. Ս. Յակովբեանց, 1869, 597 էջ:

13. Յեղափոխություն Կիլիկիոյ, Վեպ, «Արարատ», Ա տարի, թ. 14, Տփղիս, 1850, էջ 219-224; «Արարատ», Ա տարի, թ. 17, Տփղիս, 1851, էջ 262-265:

14. Սարիսյան Ս., Հայկական Ռոմանտիզմ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1966, 558 էջ:

15. Սեբեոս, Պատմություն Սեբեոսի, Աշխ. Գևորգ Աբգարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, 447 էջ:

16. Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, տպ. Սուրբ Ղազար, 1956, 274 էջ:

17. Տերտերյան Ա., Հայ կլասիկներ, Երևան, Պետական համալսարանի հրատ., 1944, 907 էջ:

18. Դաֆֆի, Սամվել, Պատմական վեպ, Հառաջաբան, Աշխ. Գուրգեն Գասպարյանի, Երևան, Անտարես, 2021, 747 էջ:

REFERENCES

1. Ananun of Edessa, Zhamanakagrut'yun /Chronology/, T'arg. bnagrity', araj. ev tsanot'. Levon Ter-Petrosyani, (Ötar aghbyurnerë Hayastani ev hayeri masin, h. 12, Asorakan aghbyurner, B.), Yerevan, pub. of the AS of the ASSR., 1982, 268 p. (In Armenian)

2. **Avetisyan Z.**, Hay patmavepi poetikan /The Poetics of the Armenian Historical Novel/, Yerevan, pub. of the AS of the ASSR., 1986, 359 p. (In Armenian)
3. **Belinski V.**, Ėntir yerker /Selected Works/, Yerevan, "Haypethrat", 1980, 536 p. (In Armenian)
4. **Catholicos Hovhannes Draskhanakertsi**, Hayots' Patmut'yun /Armenian History/, Ashkh. ev t'arg. ev tsanot'. Gevorg Tosunyani, Yerevan, YSU pub., 1996, 398 p. (In Armenian)
5. **Ghevond**, Patmut'yun /History/, Ashkh. t'arg., nerats ev tsanot'. Aram Ter-Ghevondyani, Yerevan, "Sovetakan grogh" hrat. /"Soviet Writer" pub./, 1982, 182 p. (In Armenian)
6. **Ghevont Alishan**, Shnorhali ew paragay iwr /Shnorhali and his times/, Venice, pub. San Lazzaro, 1873, VI-XXXVI, 538 p. (In Armenian)
7. Hēghap'okhut'iwn Kilikioy /Revolution of Cilicia/, Novel, "Ararat", Vol. 1, No. 14, Tbilisi, 1850 pp 219-224; "Ararat", Vol. 1. No 17, Tbilisi, 1851, pp 262-265. (In Armenian)
8. **Kirakos Gandzaketsi**, Hayots' Patmut'yun /The Armenian history/, T'argm. araj ev tsanot'. Varag Araqelyani, Yerevan, "Sovetakan grogh" hrat. /"Soviet Writer" pub./, 1982, 351 p. (In Armenian)
9. **Matthew of Edessa**, Patmut'iwn /History/, Jerusalem, pub. St. James, 1869, 597 p. (In Armenian)
10. **Raffi**, Samvel, Patmakan vep, Harajaban, Ashkh. Gurgen Gasparyani, Yerevan, "Antares" pub., 2021, 747 p. (In Armenian)
11. **Sarinyan S.**, Haykakan Romantizm /Armenian Romanticism/, Yerevan, pub. of the AS of the ASSR, 1966, 558 p. (In Armenian)
12. **Sebeos**, Padmut'iwn Sepēosi /The history of Sebeos/, Ashkh. Gevorg Abgaryani, Yerevan, pub. of the AS of the ASSR., 1979, 447 p. (In Armenian)
13. **Sparapet Smbat**, Taregirk' /Yearbook /, Venice, pub. San Lazzaro, 1956, 274 p. (In Armenian)
14. **Taguhi Sh. (Ör. Menik)**, Yerker /Works/, Ashkh. Albert Makaryani, Yerevan, Nairi, 2015, 203 p. (In Armenian)
15. **Terteryan A.**, Hay klasikner /The Armenian Classics/, Yerevan, YSU pub., 1944, 907 p. (In Armenian)
16. **Tovma Artsruni and Ananun**, Patmut'yun Artsrunyats' tan /The History of Artsruni Dynasty/, Nerats., t'arg. ev tsanot'. Vrej Vardanyani, Yerevan, "Sovetakan grogh" hrat. /"Soviet Writer" pub./, 1978, 406 p. (In Armenian)
17. **Tserents**, Yerker /Works/, Yerevan, "Sovetakan grogh" hrat. /"Soviet Writer" pub./, 1957, 640 p. (In Armenian)
18. **Tserents**, Yerker /Works/, Yerevan, "Haypethrat", 1957, 643 p. (In Armenian)

Լևոն (Ներսէս արք.) Ալոյան – ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ակադ. Հր. Թամրազյանի անվ. հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ, Երոսաղեմի Հայոց պատրիարքության «Սիոն» ամսագրի գլխավոր խմբագիր: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ 19-րդ դարի հայ գրականություն, արևմտահայ գրականություն, հայ հին և նոր գրականություն, պատմագրություն:

ORCID ID: 0000-0002-5149-1853

fr.nerseh@yahoo.com

Levon (Archimandrite Nerseh) Aloyan – Ph.D. Student at Yerevan State University, Faculty of Armenian Philology, Chair of History of Armenian Literature and Literary Theory after Academician Hrant Tamrazyan; editor-in-chief of the periodical of the Armenian Patriarchate of Jerusalem “Sion”. Academic interests: Armenian literature of the 19th century, Western Armenian Literature, Ancient and Modern Armenian literature, historiography.

ORCID ID: 0000-0002-5149-1853

fr.nerseh@yahoo.com

Левон (Архимандрит Нерсе) Алоян - Соискатель кафедры истории армянской литературы и литературоведения имени Гранта Тамразяна ЕГУ, главный редактор журнала Армянского Иерусалимского патриархата «Сион». Научные интересы: армянская литература XIX века, западноармянская литература, древне и новоармянская литература, историография.

ORCID ID: 0000-0002-5149-1853

fr.nerseh@yahoo.com